

# Ախտահանություն

Ախտահանության նպատակն է անասնաշենքում վերացնել հիվանդաձին միկրոբները, վիրուսները և հիվանդությունների այլ միկրոօրգանիզմները, որի արդյունքում ստեղծվում է մաքուր միջավայր կենդանիների առողջության և բարձր մթերատվության ապահովման համար:

Ախտահանությունը պետք է անցկացնել փարեկան 2 անգամ՝ գարնանը (կենդանիներին արոպ փանելուց հետո) և աշնանը (կենդանիներին արոպից բերելուց առաջ):

Ախտահանությունը կատարում են 2 փուլով.

## 1. Մեխանիկական ախտահանություն

- հեռացնել անասնաշենքից բոլոր ավելորդ իրերը
- հեռացնել կերի մնացորդները և գոմաղբը
- եթե կա վերանորոգման անհրաժեշտություն, ապա վերանորոգել այդ հատվածը
- սովորական գոլ ջրի շիթով խոզանակների օգնությամբ լվանալ անասնաշենքի հատակը, պատերը և առասպաղը
- փակել անասնաշենքի բոլոր պատուհանները, դռները, օդանցքները

## 2. Քիմիական ախտահանություն

- փոքր անասնաշենքերում սովորական ցողարկիչներով, իսկ մեծ գոմերում LՄԴ, ՎԴՄ կամ ԴՈՒԿ-ով ցողարկել քիմիական ախտահանիչներ, օրինակ՝ Ֆորմալին, քլորֆորմ, կաուստիկ սոդայի կամ պարաֆորմի լուծույթներ, Virkon-S, Virex (UKB), Iodophor և այլն:
- 2-3 օր անց անասնաշենքը սպիտակեցնել կրով
- Վերջում 2 օր օդափոխել անասնաշենքը՝ բացելով պատուհանները, դռները և օդանցքները:




**Virkon-S-ը, Virex (UKB)-ը, Iodophor** –ը նորագույն և արդյունավետ ախտահանիչ միջոցներ են:

- Virkon-S-ը օգտագործել 1-2%-անոց լուծույթների տեսքով (այսինքն՝ 1լիտր ջրին խառնել 10գ կամ 20գ ազոդ նյութից)
- Virex (UKB)-ը 1:300 հարաբերությամբ լուծույթի տեսքով
- Iodophor –ը՝ 25մլ նյութը 10լ ջրին:

Iodophor –ը նախատեսված չէ փարածքների ախտահանման համար, այն կիրառվում է կերամանների, ջրամանների, ինկուբատորների, դուլների ախտահանման համար, իսկ Virkon-S-ը և Virex (UKB)-ը նախատեսված են նաև փարածքների ախտահանման համար: Virkon-S-ով ախտահանություն անում են նաև այն դեպքում, երբ շենքում առկա են կենդանիներ:



 Schweizerische Eidgenossenschaft  
Confédération suisse  
Confederazione Svizzera  
Confederaziun Svizra

Swiss Agency for Development  
and Cooperation SDC

 SDA Strategic  
Development Agency  
Strategies for Development